ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.04.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/68

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Մասնակից՝ «Սեդա Բաբկենի Շբոյան» Ա/Ձ

Մասնակցությամբ՝
«Սեդա Բաբկենի Շբոյան» Ա/Ձ-ի ներկայացուցիչ՝ Ռ. Շբոյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-19/47» ծածկագրով գնանշման հարցում, ախտորոշման նյութերի և հավաքածուների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-19/47-1-8-20»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 05.03.2020թ.-ի թիվ 26/26-1/3392-2020 գրությամբ «Սեդա Բաբկենի Շբոյան» Ա/Ձ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. <u>Գործի նախապատմությունը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ էկոնոմիկայի նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 03.03.2020թ.-ի թիվ 09.18.11/2552-2020 գրության հիման վրա, 05.03.2020թ.-ին «Սեդա Բաբկենի Շբոյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 05.03.2020թ.-ին:

06.03.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/63 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել www.gnumner.am կայքում:

16.03.2020թ.-ին ու 06.04.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Ընթացակարգի քննությունն ավարտվել է 16.03.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 06.04.2020թ.-ին:

2. <u>ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը 03.03.2020թ.-ի թիվ 09.18.11/2552-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել է, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարության և «Սեդա Բաբկենի Շբոյան» Ա/Ձ-ի միջև 24.01.2020թ.-ին կնքվել է թիվ «ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-19/47-1-8-20» ծածկագրով պետական գնման պայմանագիրը, սակայն «Սեդա Բաբկենի Շբոյան» Ա/Ձ-ի կողմից 25.02.2020թ.-ին ստացվել է դիմում՝ կնքված պայմանագրի գործունեության դադարեցման վերաբերյալ, ինչով պայմանավորված գնահատող հանձնաժողովը որոշել է միակողմանի լուծել կնքված պայմանագիրը՝ հիմք ընդունելով մասնակցի կողմից ներկայացված դիմումը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրվել է «Սեդա Բաբկենի Շբոյան» Ա/Ձ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Սեդա Բաբկենի Շբոյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 09.03.2020թ.-ին գրությամբ դիմել է «Սեդա Բաբկենի Շբոյան» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 05.03.2020թ.-ի թիվ 26/26-1/3392-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում, առարկություններ կամ կարծիք:

Ներկայանալով հրավիրված նիստին Մասնակցի ներկայացուցիչը հայտնել է, որ Պայմանագրով նախատեսված ապրանքները մատակարարել է չափաբաժիններով (доза), այլ ոչ թե միլիլիտրերով:

4. <u>ՍՑ-LO-2020/68 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ էկոնոմիկայի նախարարության և «Սեդա Բաբկենի Շբոյան» Ա/Ձ-ի միջև 24.01.2020թ.-ին կնքվել է թիվ «ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-19/47-1-8-20» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Կնքված Պայմանագրերի հավելված 1-ով տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է ապրանքների մատակարարման ժամկետները, ծավալները և հասցեն: Մասնավորապես պետք է մատակարարվեր ախտահանիչ նյութ

(կաթնասունների տուբերկուլյոզի ալերգիկ ախտորոշիչ տուբերկուլին), 20մլ սրվակներով 4240 հատ ք. Երևան, Էրեբունի 12 հասցեով:

Կողմերի միջև 05.02.2020թ.-ին կնքվել է 24.01.2020թ.-ին կնքված թիվ «ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-19/47-1-8-20» ծածկագրով պետական գնման պայմանագրի լրացուցիչ համաձայնագիր, որով ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել 2020թ.-ի փետրվար ամիսը:

Մասնակիցը 25.02.2020թ.-ին գրությամբ դիմել է ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը և խնդրելով հաշվի առնել անհատ ձեռնարկության որոշ ֆինանսական խնդիրներ առաջարկել է լուծել /դադարեցնել/ կողմերի միջև կնքված Պայմանագիրը:

www.gnumner.am համացանցային կայքում 03.03.2020թ.-ին հրապարակվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության և «Սեդա Բաբկենի Շբոյան» Ա/Ձ-ի միջև 24.01.2020թ.-ին կնքված թիվ «ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-19/47-1-8-20» ծածկագրով պետական գնման պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցում:

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 05.03.2020թ.-ի թիվ 26/26-1/3392-2020 գրությամբ «Սեդա Բաբկենի Շբոյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված տնտեսական ապրանքները (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է

նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

ՀՀ էկոնոմիկայի նախարարության և «Սեդա Բաբկենի Շբոյան» Ա/Ձ-ի միջև 24.01.2020թ.-ին կնքված թիվ «ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-19/47-1-8-20» ծածկագրով պետական գնման պայմանագիր հավելված 1-ով տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է ապրանքների մատակարարման ժամկետները, ծավալները և հասցեն: Մասնավորապես պետք է մատակարարվեր ախտահանիչ նյութ (կաթնասունների տուբերկուլյոզի ալերգիկ ախտորոշիչ տուբերկուլին), 20մլ սրվակներով 4240 հատ ք. Երևան, Էրեբունի 12 հասցեով:

Կողմերի միջև 05.02.2020թ.-ին կնքված՝ 24.01.2020թ.-ին կնքված թիվ «ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-19/47-1-8-20» ծածկագրով պետական գնման պայմանագրի լրացուցիչ համաձայնագրով ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել 2020թ.-ի փետրվար ամիսը:

Մասնակիցը 25.02.2020թ.-ին գրությամբ դիմել է ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը և խնդրելով հաշվի առնել անհատ ձեռնարկության որոշ ֆինանսական խնդիրներ առաջարկել է լուծել /դադարեցնել/ կողմերի միջև կնքված Պայմանագիրը:

www.gnumner.am համացանցային կայքում 03.03.2020թ.-ին հրապարակվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության և «Սեդա Բաբկենի Շբոյան» Ա/Ձ-ի միջև 24.01.2020թ.-ին կնքված թիվ «ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-19/47-1-8-20» ծածկագրով պետական գնման պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Սեդա Բաբկենի Շբոյան» Ա/Ձ-ն հրաժարվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության և «Սեդա Բաբկենի Շբոյան» Ա/Ձ-ի միջև 24.01.2020թ.-ին կնքված թիվ «ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-19/47-1-8-20» ծածկագրով գնման պայմանագրի կատարումից՝ խնդրելով լուծել այն, որի արդյունքում խախտվել են Պայմանագրի էական պայմանները:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, «Սեդա Բաբկենի Շբոյան» Ա/Ձ-ի կողմից դրսևորած անգործության արդյունքում, Պատվիրատուն հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, միակողմանի 03.03.2020թ.-ին լուծել է այն՝ www.gnumner.am համացանցային կայքում 03.03.2020թ.-ին հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը՝ միաժամանակ այն թիվ 09.18.11/2546 գրությամբ ուղարկելով Մասնակցի:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Սեդա Բաբկենի Շբոյան» Ա/Ձ-ն խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը: Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի

դրույթները, Մասնակցին պետք է ընդրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 05.03.2020թ.-ի թիվ 26/26-1/3392-2020 գրությամբ «Սեդա Բաբկենի Շբոյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/68 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Սեդա Բաբկենի Շբոյան» Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**